ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՏԻԿ ՇՐՋԱՆԻ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ

Ժ. Դ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Քաղաքաշինության կարևորագույն օղակներից մեկը հնում պաշտպանական կառույցներն էին, որոնք արտահայտում էին պետության տնտեսական ու քաղաքական վիճակը և տվյալ ժամանակաշրջանի ճարտարապետության ու ռազմարվեստի նվաճումները։ Հզոր պաշտպանական սիստեմներ ունեցող քաղաքներն ու ամրոցները, լավ կազմակերպված զորքի հետ միասին, երկրի անկախության գրավականն էին։ Ուստի, պաշտպանական կառույցները պետք է համապատասխանեին զարգացող պոլիորկետիկայի պահանջներին և մշտապես լինեին պատրաստի վիճակում։

Հայաստանում պաշտպանական կառույցները երևան են գալիս դեռևս մ. թ. ա. III հազարամյակում և նշանակալից զարգացման են հասնում արդեն ուրարտական շրջանում։ Այդ առաջընթացին նպաստում են ուրարտական պետության սերտ կապերը հարևան փոքրասիական և ասուրա-բաբելական մշակույթի հետ։ Մ. թ. ա. VII դարում ուրարտական ռազմական կառույցներում որմնահեցերը, որոնք պարիսպների միայն արտաքին կողմից էին ելուստավորվում, փոխարինվեցին աշտարակներով։ Վերջիններս ելուստավորվում էին պարիսպների թե՛ արտաքին և թե՛ ներքին կողմերից։ Այս նորամուծությունը խիստ բարձրացնում էր պարիսպների պաշտպանունակությունը՝ հնարավորություն տալով հարվածելու նաև թևերից[1]։

Ուրարտական պետության կործանումից հետո կյանքը շարունակվեց կամ վերականգնվեց միայն համեմատաբար քիչ տուժած առանձին քաղաքներում, որոնք ուրարտական պետության գոյության երկրորդ շրջանում կորցրել էին իրենց դլխավոր դերը (Տուշպա, Էրեբունի, Արգիշտիխինիլի)[2]։ Ենթադրվում է, որ առաջին երկուսը եղել են սատրապական կենտրոններ և ունեցել են ռազմավարչական բնույթ[3], որտեղ նույնությամբ պահպանվել են ուրարտական պաշտպանական կառույցները։

Մ. թ. ա. III դարում Հայաստանն ընդգրկվելով Առաջավոր Ասիայի հելլենիստական երկրների ազդեցության ոլորտը, բռնեց տնտեսական ու մշակութային վերելքի ուղին։ Հելլենիստական մյուս երկրների օրինակով Հայաստանում ևս, մ. թ. ա. III դարի կեսերից սկսած, թագավորների կողմից հիմնադրվեցին քաղաքներ, որոնք կոչված էին լինելու ոչ միայն առևտրատնտեսական ու մշակութային կենտրոններ, այլև իրենց ստրատեգիական դիրքի և հզոր պաշտպանական կառույցների շնորհիվ ունենալու էին խոշոր ռազմական նշանակություն։

Հայաստանում հելլենիստական և մ. թ. առաջին դարերի նման կառույցների վերաբերյալ գրավոր աղբյուրների հաղորդած տեղեկությունները շատ քիչ են, ուստի դժվար է պատկերացում կազմել նրանց մասին։ Այս առումով մեծ կարևորություն ունեն պեղումներով բացված պաշտպանական համակարգերը, որոնք ստանում են սկզբնաղբյուրի նշանակություն։

Հին Հայաստանի մայրաքաղաք Արմավիրի պեղումների (սկսվել են 1962 թ.) կարևոր արդյունքներից է պաշտպանական համակարգի հայտնաբերումը։ Այն գտնվում է Արարատյան դաշտի միջին մասում, Արաքսի հյուսիսային ափին։ Միջնաբերդը տեղավորված է 79 մ բարձրություն ունեցող, բավականին դժվարամատչելի մի բլրի վրա, որտեղ եղել է ուրարտական Արգիշտիխինիլի քաղաքի կրոնական կենտրոնը։ Ուրարտուի անկումից հետո, վաղ հայկական և հելլենիստական շրջաններում, պարիսպները նույնությամբ վերականգնվել են և օգտագործվել[4]։ Հելլենիստական շրջանում, միջնաբերդի հյուսիս-արևմտյան հատվածում կառուցվել է միայն

---

[1] Կ. Կ. Ղաֆադարյան. Արգիշտիխինիլի քաղաքի ճարտարապետությունը. Երևան, 1984, էջ 57—61։

[2] Б. Б. Пиотровский. Ванское царство. М., 1959, с. 113, 117.

[3] Г. А. Тирацян. Города Армении эллинистического времени в свете археологических исследований.—Вестник древней истории (ВДИ), 1979, № 2, с. 160—161.

[4] Նույն տեղում, էջ 162—165։

առանձին կանգնած մի կլոր աշտարակ, հավանաբար մուտքի և համեմատաբար մատչելի այդ լանջի պաշտպանության համար։

Ուշագրավ են Երվանդաշատի պաշտպանական համակարգի մասին Մովսես Խորենացու հաղորդած տեղեկությունները՝ մայրաքաղաքը Արմավիրից Երվանդ վերջինի կողմից Երվանդաշատ փոխադրելու կապակցությամբ (մ. թ. ա. III դարի վերջին քառորդ)։ «Ընդ որ նեղեալ Երուանդայ,—գրում է Խորենացին,—նա և ամրագունի ևս տեղւոյ ելեալ ի խնդիր՝ փոխէ զարքունիսն յարևմուտս կոյս ի քարակտուր մի բլուր, զորով պատ առեալ Երասխայ՝ ընդդէմ Ախուրեանն հոսի գետ։ Պարսպէ զյլուրն, և ի ներքսագոյն քան զպարիսպն ընդ բաղում տեղիս կտրեալ զքարինսն մինչև ի յատակս բլրոյն հաւասար գետոյն, մինչև դիմել շուրջ գետոյն ի փորուածն, յրմպելեաց պատրաստութիւն։ Զմիջնաբերդն ամրացուցանէր բարձր պարսպօք, և դրունս պղնձիս կանգնէր ի միջոցի պարսպին, և ելանելիս երկաթիս ի ներքուստ ի վեր մինչև ցդուռնն, և ի նմա որոգայթս իմն ծածուկս ընդ մէջ ասպիճանացն, որպէս զի ըմբռնեսցի՝ եթէ ոք գաղտ ելանելով դաւել կամիցի զարքայն։ Եւ էր, ասեն, երկդիմի. որպէս զի մինն լիցի սպասաւորաց արքունի և ամենայն ելմտից ճանապարհ տուընչենային, իսկ միւս գիշերային և մարդադաւաց»[5]։

Ավելի լավ հասկանալու համար Երվանդաշատի պաշտպանական համակարգը, նախ անդրադառնանք նրա տեղադրությանը։

Երվանդաշատի և Երվանդակերտի տեղադրությամբ զբաղվել են մի շարք գիտնականներ, որոնք տարբեր կարծիքներ են հայտնել[6]։ Նրանցից ոմանք չեն եղել տեղում, ուստի ճիշտ չեն տեղադրել, իսկ մյուսները շփոթել են Ննդոց անտառի հետ։ Վերջիններս Ախուրյան և Արաքս գետերի միախառնման տեղից արևելք, Արաքսի հյուսիսային (ձախ) ափին ընկած վայրում, մեծ տարածության վրա նկատել են քաղաքի պարիսպները, շինություններ և «գտել» այն բարձունքը, որի շուրջը պտույտ էր անում Իրասխը, իսկ դիմացից՝ այսինքն արևմուտքից, հոսում էր Ախուրյան գետը[7]։ Սակայն Մովսես Խորենացին չի ասում, թե Ախուրյան գետը հոսում է Երվանդաշատի միակտոր ապառաժ բլրի արևմտյան կողմից, այլ Երվանդաշատը կառուցվել է Ախուրյանի դիմաց գտնվող միակտոր ապառաժ բլրի վրա, «որը շուրջ պատում է Երասխը» (միայն)։ Իրոք, Ախուրյանի Արաքսին միախառնվելու տեղի դիմաց, Արաքսի աջ (հարավային) ափին, գրեթե ուղղահայաց վեր է խոյանում առանձին կանգնած մի ապառաժ մեծ բլուր, «որը շուրջ պատում է Երասխը»։ Մոտ 100 մ բարձրություն ունեցող այդ բլուրը գետի կողմից անմատչելի է և շատ հարմար պաշտպանության համար։ Մինչդեռ Արաքսի ձախ (հյուսիսային) ափը բլուրներից դեպի դեպ փովող դաշտ է (գետահովիտ) և հատկապես բլուրների կողմից խիստ անհարմար է պաշտպանության համար։ Այս մասում, ինչպես Մովսես Խորենացին է նշել, Երվանդի տնկած Ննդոց անտառն է եղել. «Տնկէ և մայրի մեծ ի հիւսիսոյ կողմանէ գեսոյն. և որմով ամրացուցանէ. արդելլով ի ներքս այծեմունս երագունս, և ղեղանց և զեղջերուաց ագդ, և ցիռս և վարազս. որք ի բազմութիւն աճեցեալ լցին զանտառն, որովք ուրախանայր թագաւորն յաւուրս որսոց։ Եւ անուանէ զանտառն՝ Ննդոց»[8]։

Եվ ահա վերոհիշյալ կարծիքի հեղինակները տեսել են այս անտառի պարիսպը, պատնեշը։ Ըստ երևույթին, երբ Երվանդաշատը դադարեց թագավորանիստ քաղաք լինելուց, այս անտառն էլ կորցրեց իր նշանակությունը և հետագայում այնտեղ նույնպես հաստատվեցին բնակատեղիներ։ Այս տարածքից հավաքված նյութերի մեջ հելլենիստական խեցեղենի բեկորները շատ աննշան են, գերակշռում են միջնադարյան նյութերը։ Շատ հնարավոր է, որ Ննդոց անտա-

---

5 Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց. Երևան, 1981, II, ԼԹ։

6 Բ. Ն. Առաքելյան. Ո՞ւրտեղ են գտնվել Երվանդաշատ և Երվանդակերտ քաղաքները.—«Պատմա-բանասիրական հանդես», 1965, № 3, էջ 83—93 (գրականությունը տե՛ս նույն տեղում)։ Г. А. Тирацян. Указ. соч., с. 166—167.

7 Ֆ. Ի. Տեր-Մարտիրոսովը 1985—86 թթ. եղել է այդ վայրերում և Ննդոց անտառում, Արաքսի ձախ ափին կատարած հետախուզական աշխատանքների հիման վրա ժխտում է այդ տեսակետը։ Նա բարձունքից հարավ-արևմուտք եղած ավերակները համարում է անտառում կառուցված Երվանդունիների պալատական համալիր։ Մենք միանում ենք նրա այդ կարծիքին, սակայն մեզ համոզիչ չի թվում Երվանդակերտ դաստակերտի նրա տեղադրությունը (Ֆ. Ի. Տեր-Մարտիրոսով. Երվանդաշատ (տեղադրություն և տիպաբանություն).—ՀՍՍՀ-ում 1985—1986 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան. Զեկուցումների թեզիսներ, Երևան, 1987, էջ 42—44)։

8 Մովսես Խորենացի, II, ԽԱ։

ռում Երվանդը կառուցած լինի պալատական մի շենք, որի ժամանակ հանգստանալու համար, ինչպես հետագայում արեց Տիգրանը՝ Տիգրանակերտի մոտ տնկած անտառում և Խոսրով Կոտակը՝ Դվինի բլրի վրա, իր տնկած Խոսրովակերտ անտառում[9]։ Եվ վերջապես, Մովսես Խորենացին, նկարագրելով գեղեցիկ Երվանդակերտ դաստակերտը, նշում է. «Եւ այսպիսի գեղեցկութեան դիր՝ անքթթելի իմն գոգցես ի բարձրաւանդակ թագաւորանիստ զհայեցուածսն ունի. և արդարև բերրի և թագաւորական դաստակերտնն»[10]։ Ախուրյան գետի երկու ափին, լեռների լանջին կառուցված (առավել ևս վերոհիշյալ հեղինակների տեղագրած) Երվանդակերտից կարող էր երևալ միայն Ախուրյանի դիմաց գտնվող ապառաժ թագավորանիստ բլրի բարձրավանդակը, ոչ թե Ծննդոց անտառը։ Ինչպես տեսնում ենք, Երվանդաշատը ստրատեգիական տեսակետից շատ հարմար գիրք է ունեցել և, ըստ Մովսես Խորենացու, քաղաքը պարսպապատված է եղել ու ջրով ապահովված։ Քաղաքի միջնաբերդը ամրացված է եղել բարձր պարիսպներով, որոնց մեջ Երվանդը պղնձե դռներ է դրել (գուցե կոկնակի)։ Դեպի դարպասը տանող երկաթե սանդուղքները հավանաբար եղել են շարժական, իսկ դարպասի (հնարավոր է՝ պալատական համալիրի) երկու կողքերին թաքնված որոգայթներ են պատրաստվել՝ դավադիրներին բռնելու համար։

Հելլենիստական պաշտպանական կառույցների ուսումնասիրության համար առանձնակի նշանակություն ունեն Արտաշատի պեղումները՝ հաշվի առնելով քաղաքի կարևորությունը (որպես մայրաքաղաքի) և տեղադրությունը, ստրատեգիական դիրքը, բարդ ռելիեֆը, երկարատև գոյությունը (մ. թ. ա. 180-ական—մ. թ. 360-ական թթ.)։

Արտաշատի մասին վկայություններ են պահպանվել Ստրաբոնի, Պլուտարքոսի, Տակիտոսի, Խորենացու և ուրիշ հայ ու օտար պատմիչների մոտ։ Ստրաբոնն ասում է, որ «այս վերջինը գեղեցիկ է շինված և երկրի թագավորանիստ քաղաքն է։ Նա գտնվում է գետածոցում, որը նման է թերակղզու, և նրա շուրջը, բացի պարանոցի մասից, գետի առջև ձգվում է պարիսպը, իսկ պարանոցը փակված է խրամով և պատվարով»[11]։ Տակիտոսը նշում է, որ երբ Կորբուլոնը որոշեց շարժվել դեպի Արտաշատ, նա լեգեոններին շառաչնորդեց կարճ ճանապարհով, որպեսզի ստիպված չլինեն քաղաքային պարիսպները ողողող Արաքս գետի կամրջով անցնել, այլապես անխուսափելիորեն կընկնեին հակառակորդի հարվածի տակ[12]։ Հետագայում, որպեսզի քաղաքը չավերվի, ասում է պատմիչը, քաղաքացիները կամավոր բաց են անում դարպասները։ Սակայն 59 թ. քաղաքից հեռանալուց առաջ Կորբուլոնը հիմնահատակ ավերում է այն։ Տակիտոսը նրա այդ արարքը արդարացնելու համար նշում է, որ քաղաքի պարիսպների ընդարձակության պատճառով հնարավոր չէր փոքր կայազորով քաղաքը պահել[13]։

Ըստ Մովսես Խորենացու քաղաքը կառուցված է եղել Մեծամորը Արաքսին միախառնվելու տեղում եղած բլրի վրա[14]։

Արտաշատը հիմնադրվել է մ. թ. ա. 180-ական թթ. Արտաշես I-ի կողմից, իբրև միավորված Հայաստանի մայրաքաղաք։ Այն գտնվում էր Արաքս և Մեծամոր գետերի միախառնման տեղում ստեղծված թերակղզու, 12 մեծ ու փոքր բլուրների վրա և նրանց արևելյան ու հարավային կողմում փռված հարթավայրում, միջազգային առևտրական ճանապարհների խաչմերուկում։ Այսինքն, տեղի ընտրությունը շատ հաջող էր կատարված թե՛ ստրատեգիական և թե՛ տնտեսական առումով, և միանգամայն համապատասխանում էր բոլոր այն պահանջներին, որոնք անհրաժեշտ էին քաղաքի կառուցման համար[15]։

---

9 Այդ մասին տե՛ս Ժ. Դ. Խաչատրյան. Հելլենիստական քաղաքաշինության որոշ ավանդույթների, Երազամույն վայրի և Դվին քաղաքի հիմնադրման մասին.—ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հաս. գիտ.», 1987, № 2, էջ 53—57։

10 Մովսես Խորենացի, II, ԽԹ։ Այս վկայությունը կարող է օգնել նաև Երվանդակերտի տեղագրությունը ճշտելուն։

11 Страбон. География в 17 книгах, XI, 14, 6, пер. и коммент. Г. А. Стратановского, Л., 1964.

12 Корнелий Тацит. Анналы, XIII, 39, пер. А. С. Бобовича.—Сочинения в двух томах, т. 1, Л., 1969.

13 Նույն տեղում, 41։

14 Մովսես Խորենացի, II, ԽԹ։

15 Архитектура античного мира (ААМ). М., 1940, с. 33; Витрувий. Десять книг об архитектуре, пер. Ф. А. Петровского. Т. 1, М., 1936, 32—33.

Պեղումները հաստատեցին Ստրաբոնի, Պլուտարքոսի և մյուս աղբյուրների վկայությունները Արտաշատի մեծ (մոտ 600 հա) ու գեղեցիկ քաղաք լինելու և ընդարձակ պարիսպներ ունենալու մասին։ 1970 թ. սկսած պեղումների շնորհիվ որոշված է բլուրների դերը քաղաքի կառուցվածքում[16]։ Միջնաբերդը եղել է ամենաբարձր և ընդարձակ բլրի վրա (բարձր. 70 մ), որն առանձնահատուկ դիրք էր գրավում քաղաքում և ամենալավ պաշտպանվածն էր։



Նկ. 1

Պեղումներով բացվել և հետազոտվել է քաղաքի ու միջնաբերդի պարիսպների գրեթե կեսը, մոտ 4500 մ երկարությամբ (չափագրությունները կատարել է Արտաշատի արշավախմբի ճարտարապետ Ա. Վ. Տոնիկյանը)։ Արտաշատի պարիսպների երկարությունն ընդհանրապես կարող էր լինել 10000 մետրից ավելի (նկ. 1)։ Մեզ հայտնի քաղաքներից ամենաերկար պարիսպները եղել են Սիրակուզայինը՝ 29 կմ, Ալեքսանդրիայի պարիսպները մոտ 16 կմ էին,

[16] Ж. Д. Хачатрян, А. В. Тоникян. Некоторые вопросы градостроительства античного Арташата.—Четвертый международный симпозиум по армянскому искусству. Тезисы докладов. Ереван, 1985, с. 286—288.

Էֆեսոսինը՝ 12 կմ, Միլետինը՝ 11,2 կմ[17]։ Արտաշատում, ինչպես Ալեքսանդրիայում, Սելևկիայում և հելլենիստական շատ քաղաքներում, մարդիկ բնակվում էին նաև պարիսպներից դուրս, իսկ վտանգի դեպքում պատսպարվում էին քաղաքում։

Արտաշատի բոլոր բլուրները պարսպապատ են և ըստ իրենց կարևորության ունեն մեկ կամ երկու պաշտպանական սիստեմ (2 և մասամբ 6, 7)։ Միջնաբերդի պարիսպը (ներքևից երկրորդը), որը կառուցվել է առաջին հերթին, անցնում է դաշտավայրի համեմատ 50—55 մ բարձրության վրա։ Դա ուրարտական միջնաբերդի պարիսպն է, որը 400 մ բացվել է և տեղտեղ պահպանվել մինչև 6—7 մ բարձրությամբ (հյուսիսային լանջ)։ Արտաշատի հիմնադրման ժամանակ այն վերականգնվել ու հարմարեցվել է հելլենիստական ռազմարվեստի պահանջներին։ 2,7 մ լայնություն ունեցող ուրարտական պարիսպներն արտաքինից ունեն ընդհանուր



Նկ. II

գծից 1 մ առաջ դրված դրեթե հավասար՝ 5,5—6,5 մ լայնությամբ աշտարակ-որմնահեցերը։ Պարսպի հիմնախարսխային մասը անմշակ քարերից է, ամրացված կավե շաղախով, որը վերևից ծածկված է մոտ 50 սմ կավե միջնաշերտով։ Նրա վրա բարձրանում է հում աղյուսի կանոնավոր շարքը (51×51×14 և 51×35×14 սմ)։ Կոնտրֆորսների աղյուսաշար մասի անկյունները եռատամ, 30 սանտիմետրանոց անցումներ ունեն, իսկ կոնտրֆորսները (լայն. 1 մ խոր. 30 սմ) ու նրանց միջև ընկած պատերի հատվածները (լայն. 1,7 մ. խոր. 60 սմ)՝ կենտրոնական մասերում նույնանման անցումներով ձևավորված խորշեր (նկ. II, 1, 2)։ Այս ամենը, կոնստրուկտիվ նշանակություն ունենալուց բացի, լուսաստվերի հարուստ խաղ էր ստեղծում, որով աչխուժություն էր հաղորդում և շքեղացնում պարսպի միապաղաղ ճակատը (նկ. IV)։ Նլուստներով և խորշերով մշակված ճակատները բնորոշ էին Միջագետքի ճարտարապետությանը[18], որը, սակայն, իր զարգացմանը հասավ ուրարտական ճարտարապետության մեջ։ Այսպես են ձևավորված Թոփրախկալեից և Կարմիր բլուրից գտնված բրոնզե թիթեղի վրա պատկերված եռահարկ շենքի և աշտարակի ճակատը[19], «Մհերի դուռը»՝ Վանում[20], Արշրուտը՝ Սալխանե

[17] В. Тарн. Эллинистическая цивилизация. М., 1949, с. 280.

[18] Всеобщая история архитектуры в 12 томах (ВІІА). Т. 1, М., 1970, с. 198—211, рис. 8, 15, 16, 18, 20, с. 220, рис. 34, 35.

[19] Б. Б. Пиотровский. Искусство Урарту VIII—VI вв. до н. э. Л., 1962, с. 90, рис. 56; О. Х. Халпахчьян. Строительная культура армянского нагорья с древнейших времен по VII в. до н. э.—Архитектурное наследство. М., 1983, № 31, с. 127, рис. 38.

[20] Б. Б. Пиотровский. Ванское царство, рис. 67; ВІІА, I, рис. 32.

գյուղում, Բոստանկայան[21], Էրեբունիի ուրարտական պալատի և Susi տաճարի դռները[22] և այլն։ Պերսեպոլսի գանձարանի պատերի խորշերի հետ զուգակցված կոնտրֆորսները[23] ուղղակիորեն աղերսվում են Արտաշատի ուրարտական պարիսպների հետ։ Այս և մյուս շինությունների դռների աստիճանաձև բացվածքները մեկ անգամ ևս վկայում են, որ Ուրարտուն եղել է Աքեմենյան Պարսկաստանի Հարտարապետության ձևավորման ակունքներից մեկը[24]։ Իսկ Արտաշատի ուրարտական ամրաշինական կառույցների զարգացման բարձր մակարդակը ցույց է տալիս, որ Ուրարտուի անկումից 400 տարի հետո ավելի նպատակահարմար է համարվել օգտագործել ուրարտական պարիսպը, քան կառուցել նորը։ Ճիշտ է, Արտաշատում այն օգտագործվել է ավելի ստեղծագործաբար, քան Արմավիրում ու մի շարք այլ քաղաքներում, որտեղ ուրարտական պարիսպները վերականգնվել են նույնությամբ։

Արտաշատում, ուրարտական պարիսպների անկյունային կոնտրֆորսները փոխարինվել են 15 և տրամագիծ ունեցող կլոր աշտարակներով։ Մուտքն իջեցվել է դեպի Ա 1 բլուրը տանող լանջը և պաշտպանվել 13 մ տրամագիծ ունեցող երկու հզոր աշտարակներով։

Պարիսպների ներքին շարքը, որն ընդհանուր է բլուրների համար, անցնում է 20—25 մ բարձրության վրա։ Մեծ վարպետությամբ օգտագործելով տեղանքի ընձեռած հնարավորությունները, պարիսպները կառուցել են բեկված գծերի, այսպես կոչված, «սղոցի ատամների» ձևով (նկ. I), ինչպես նման դեպքերում առաջարկում էին կառուցել Փիլոն Բյուզանդացին և մյուս անտիկ մեխանիկները[25]։ Բեկված գծերի ձևով է կառուցված նաև Վանի ամրոցի պարիսպների մի մասը[26], սակայն Վանի ուրարտական ամրոցը հետագայում այնքան փոփոխությունների է ենթարկվել, որ դժվար է որոշակի բան ասել պարիսպների այդ հատվածների ժամանակի մասին, թեև բացառված չէ դրանց անտիկ լինելը։ Այդ սկզբունքներն են կիրառված նաև Ուրմիո լճի հարավ-արևմտյան մասում գտնվող Կալե Գյավուրի մ. թ. ա. IX—VIII դդ. ուրարտական ամրոցի տեղում մ. թ. ա. VI—V դդ. կառուցված ամրոցում[27]։ Նոր ամրոցի կառուցման ժամանակ, հյուսիս-արևմտյան հատվածում, ուրարտական պարիսպը թողնվել է նույնությամբ, իսկ մյուս մասերում՝ Արտաշատի նման, պարիսպները կառուցվել են բեկված գծերի ձևով։ Ամրոցի դարպասը, անկյունները և խոցելի տեղերը ուժեղացված են կլոր, մեծ աշտարակներով (նկ. III, 1)։

Արտաշատի միջնաբերդի և քաղաքային պարիսպների այսպիսի փոփոխություններ են կատարվել նաև Արաքսի աջ ափին, Ջուղայից ոչ հեռու գտնվող երկրորդ Կալե Գյավուրում, որտեղ մ. թ. ա. VIII դարի ուրարտական ամրոցի անկյունային աշտարակները մ. թ. ա. VI—V դդ. փոխարինվել են կլոր աշտարակներով[28], դրանք երբեմն առաջ են տարվել կամ կառուցվել են նորերը (նկ. III, 2)։

Հելլենիստական պաշտպանական արվեստին բնորոշ կառուցումներն ու փոփոխությունները, ամենայն հավանականությամբ, կատարվել են մ. թ. ա. II—I դդ.։ Այդ է վկայում նաև հայտնաբերված գունազարդ խեցեղենը[29], որ աղերսվում է Արտաշատի և անտիկ դարաշրջանի մյուս հուշարձանների այդ ժամանակի խեցեղենի հետ։

---

[21] О. Х. Халпахчьян. Указ. соч., с. 131.

[22] К. Л. Оганесян. Арин-берд, I, Архитектура Эребуни. Ереван, 1961, с. 82, 84.

[23] E. F. Schmidt. Persepolis, I. Chicago, 1953, fig. 65—68, 73, 74.

[24] К. Л. Оганесян. Кармир-блур, IV, Архитектура Тейшебаини. Ереван, 1955, с. 71, 98; Он же. Арин-берд, I, с. 88.

[25] ААМ, с. 46—47.

[26] В. М. Арутюнян. Каменная летопись армянского народа. Ереван. 1985, табл. III_1.

[27] W. Kleiss. Urärtaische Plätze und Anlagen des 11—1 Jahrtausends v. Chr. in Iran.—Archaeologische Mitteilungen aus Iran (AMI), Band 11, Berlin, 1978, S. 27—59, Abb. 9, 12.

[28] W. Kleiss. Zwei Plätze des 6 Jahrhunderts v. Chr. in Iranische Azerbaidjan.—AMI, Band 9, Berlin, 1976, s. 107—111, Abb. 1, 35.

[29] St. Kroll. Die Keramik.—AMI. Band 9, Berlin, 1976, S. 120—123, Abb. 2.



Նկ. III

Բնկված գծերի ձևով են կառուցված էփեսոսի, Պերգամոնի, Պրիենայի, Միլետի, Մեանդրի գրայի Մագնեսիայի. Նոտիումի[30], Դուրա-Էվրոպոսի[31] հելլենիստական շրջանի պարիսպները։ Այդօրինակ կառուցված պարիսպները մասամբ փոխարինում էին աշտարակներին և ավելորդ էին դարձնում, սովորականի նման, նրանց հաճախակի կառուցումը, ու հնարավորություն էին տալիս հարվածել թշնամուն և՛ թևերից, և՛ նույնիսկ թիկունքից։ Վեգեցիոսն ասում է (IV, 1—4), որ նման պարիսպների մոտ թշնամին հայտնվում էր աքցանի մեջ։

Պարիսպներն ուժեղացված էն անկյուններում և խոցելի տեղերում կառուցված, 9—15 մ տրամագիծ ունեցող հզոր աշտարակներով, որոնք պարիսպների ընդհանուր գծից 2—5 մ առաջ են դրված։ Դրանք իրարից այնպիսի հեռավորության վրա էն գտնվում, որ մեկը մյուսի տեսադաշտում էն ու կարող էն հարվածի տակ պահել միջանկյալ ամբողջ տարածությունը։ Պարիսպների ներքին շարքով բոլոր բլուրները փակվել էն և վերածվել առանձին ամրոցների, իրենց մուտքերով հանդերձ։ Այսինքն, ստեղծվել էն առանձին պաշտպանական միավորներ, որոնք իրար հետ կապված էին պարսպապատ, լավ մտածված հնարամիտ անցումներով։

Արտաշատի պարիսպները կառուցված էն այն հաշվով, որ խոցելի տարածություններ չմնան։ Այդ նպատակով հաճախ ժայռերը դարավանդաձև հարթեցվել էն կամ աստիճանաձև ետրվել, որպեսզի պարիսպը եզրով կառուցեն։ Նման մեծ չափերի աշխատանքներ էն կատարվել, հատկապես № 7 բլրի վրա, որը, ի տարբերություն մյուսների. հարթ տարածություն գրեթե չունի ու բավական սրագագաթ է։ Պատի հիմնախարսխի բարձրությունը պայմանավորված է տեղանքով և կազմում է 0,50—1,50 մ, որի վրա բարձրանում է հում աղյուսե պատը (45×45×14)։ Հիմքերն ամրացնելու և քայքայումից զերծ պահելու համար պարսպի ամբողջ պարագծով, մանր կլորավուն քարերով պատրաստված է 30—100 սմ լայնությամբ հատուկ կավե շաղախով ամրացված հենապատ, որը դեպի դուրս թեքություն ունի։

Ի տարբերություն վերը թվարկած հելլենիստական քաղաքների. Արտաշատի աշտարակները շրջանաձև էն, ներքևում հոծ, իսկ վերևում, ամենայն հավանականությամբ, մի քանի հարկանի։ Շրջանաձև է բազմանկյուն աշտարակները, ինչպես Վիտրուվիոսն[32] է ասում, ավելի կատարյալ էն, քան քառանկյուն աշտարակները և ավելի լավ են դիմանում ռմբաքարերի ու պարիսպներ քանդող մեքենաների հարվածներին։

Արտաշատի պարիսպներն աղյուսաշար էն։ Աղյուսը իր փափկության շնորհիվ թուլացնում էր հարվածի ուժը ու ճեղքվածք չէր տալիս։ Մինչդեռ քարը իր կարծրության պատճառով դիմադրություն էր ցույց տալիս, ուստի հարվածը պահպանում էր իր ամբողջ ուժը[33]։

Պաշտպանական համակարգում ամենախոցելի հատվածները քաղաքային դարպասներն էին, ուստի միշտ ավելի մեծ ուշադրություն էր դարձվում նրանց պաշտպանության կազմակերպմանը։ Ինչպես վերը տեսանք Երվանդաշատի միջնաբերդի մուտքի կապակցությամբ, այդ ուղղությամբ զանազան խորամանկ անցումներ ու միջոցներ էին մտածվել։ Մենք լրիվ պատկերացում չունենք Արտաշատի դարպասների քանակի մասին, քանի որ մեզ դեռևս չի հաջողվել քաղաքի արևելյան և հարավ-արևելյան սահմանները ճշտել։ Առայժմ հայտնի էն միայն բլուրների պաշտպանական սիստեմում բացված հինգ արտաքին դարպասները հյուսիսային, հյուսիս-արևելյան և հյուսիս-արևմտյան մասերում։ Արտաշատի մուտքերը տարբեր լուծումներ ունեն, սակայն միշտ պաշտպանվել են երկու աշտարակներով և կառուցվել այնպես, որ դեպի դարպասներ տանող ճանապարհներն անցնեն պարիսպների կողքով, որպեսզի բոլոր դեպքերում պարիսպների ու աշտարակների կողմից հարվածի տակ լինեն։ №№ 4—5 և 7—8 բլուրների միջև եղած արտաքին մուտքերը ներս են դրված ընդհանուր գծից և թշնամուն կարելի է հարվածել ճակատից, կողքերից, թիկունքից, պարիսպներից ու աշտարակներից (նկ. III, 4)։

---

[30] Т. Н. Козина. Некоторые вопросы градостроительства эллинизма.—Вопросы всеобщей истории архитектуры. Сборн. № 1, М., 1961, рис. 3, 6, 13, 22, 23, 33, с. 31, 32.

[31] A. von Gerkan. The Fortifications. The Excavations at Dura-Europos. Preliminary Report of 7—8 season of work. New Haven, 1939, p. 4—61; M. I. Rostovtzeff. Dura-Europos and its Art. Oxford, 1938, p. 17; Г. А. Кошеленко. Парфянская фортификация.—Советская археология (СА), 1963, № 2, с. 66—68.

[32] Витрувий, V, 5.

[33] Аполлодор. Полиоркетика. О каменных стенах, 158, Греческие полиоркетики.—ВДИ, 1940, № 3—4, с. 299.

Հետաքրքիր ու բարդ լուծում ունի ամրոցի Հյուսիս-արևելյան մասում տեղադրված միջնաբերդի գլխավոր մուտքը, որը գտնվում է առաջին և երկրորդ բլուրները միացնող պարանոցի ամենացածր տեղում (նկ. III, 3)։ Հյուսիս-արևմտյան արտաքին դարպասից ներս մտնելուց հետո, մինչև միջնաբերդի երկրորդ պարսպի մուտքին հասնելը, թշնամին պետք է հաղթահարեր լավ պաշտպանված մի դարպաս ևս։ Դեպի այդ երրորդ դարպասը ճանապարհն անցնում էր երկու պարիսպներին կից կառուցված զորանոցների և զինապահեստների միջև եղած փողոցով։ Քանի որ №№ 1 և 2 բլուրները սայլով բարձրանալ հնարավոր չէր, ուստի դարպասները համեմատաբար նեղ են արված՝ 2—2,50 մ, իսկ №№ 4—5 և 7—8 բլուրների դարպասները, որտեղ այդ հնարավորությունը կար, 3—4 մ են։



Նկ. IV

Պաշտպանության համար խիստ կարևոր նշանակություն ունեին աննկատ տեղերում թողնված գաղտնի անցումներն ու դռները, որտեղից պաշարվածները հանկարծակի արտելոն էին կատարում։ Մենք այդպիսի մի վկայություն ունենք Տիգրանակերտի մասին[34]։

Մեզ հայտնի չէ, թե Արտաշատի պարիսպներն ինչ բարձրություն են ունեցել։ Կարելի է ենթադրել, որ այն բլուրների վրա 12—15 մ, իսկ դաշտավայրում՝ 15—20 մ պակաս չէր կարող լինել, այսինքն, ինչպես Փիլոն Բյուզանդացին[35] է ասում, պետք է լիներ այնքան, որ թշնամին չկարողանար աստիճանները պարսպի եզրին հասցնել, թեև բլուրների հատվածում, լանջերի թեքության պատճառով դա ընդհանրապես հնարավոր չէր։ Աշտարակների բարձրությունը պետք է լիներ առնվազն 20—25 մ, որը թույլ կտար դրանք երկու-երեք հարկանի պատրաստել։ Ըստ Ապիանոսի[36], Հայաստանի երկրորդ մայրաքաղաք Տիգրանակերտի պարիսպների բարձրությունը եղել է 25—26 մ։

Դժվար է ասել, թե ինչպես են բարձրացել Արտաշատի պարիսպների վրա. շատ հավանական է, որ շարժական աստիճանների օգնությամբ։ Այդ նպատակով №№ 1, 7 և 8 բլուրներում, որտեղ բնակելի համալիրներն ուղղակի կցված են պարսպին, թողնված են դեպի պարիսպը տանող նեղ անցումներ։ № 1 բլրի վրա այդպիսի չորս անցում կա (լայն. 1,2—1,5 մ), իրարից 26—28 մ հեռավորությամբ, իսկ №№ 5 և 7 բլուրները տանող մասերում պարիսպների երկայնքով նեղ փողոցներ են թողնված (լայն. 1,3—1,6 մ), որոնք միացած են քաղաքի փողոցների ցանցին։

Արտաշատի պարիսպների լայնությունը 2,60—3,50 մ է, որը լրիվ բավարարում է պարբսպապատի վրայով զինվորների աղատ տեղաշարժերին։ Ճիշտ է, պաշտպանությունում դեռևս

---

[34] Тацит, XV, 4.

[35] Филон Византийский. О фортификации. 3, 1—7, ААМ, с. 45.

[36] App. Mithr. Eup., 84.

պարիսպները կարևոր դեր էին խաղում, սակայն գլխավոր դերը պատկանում էր խոցելի տեղերում կառուցված, բավականին առաջ դրված շրջանաձև աշտարակներին, որոնց լայնությունը բավարարում էր նետարձակ և քարանետ մեքենաներ տեղադրելու համար։ Ըստ որում, քարանետ մեքենաներ կարելի էր տեղադրել նաև պարսպից ներս, հարթ կամ հարթեցված բարձր ժայռերի վրա։ Պարիսպների արտաքին ու ներքին մասերից, հատկապես կից սենյակներից և հողի մակերեսից հայտնաբերվել են տարբեր չափերի 200-ից ավելի ռմբաքարեր, որոնց մեծ մասը հատուկ է պատրաստված։ Դրանք բաժանվում են հինգ խմբի ու կշռում են 150 գրամից մինչև 6 կգ և ունեն 8—16 սմ տրամագիծ[37]։ Ռմբաքարերի այս բազմազանությունը վկայում է տարբեր տրամաչափերի քարանետ մեքենաների առկայության մասին։ Օրինակ, Վանիում հայտնաբերված 12 սմ տրամագծով 2,3 կգ քաշով ռմբաքարի համար (VI խումբ)[38], հին բանաձևերով կատարած հաշվումների համաձայն, հարկավոր էր 8,78 դակտիլ[39] (16 սմ) տրամաչափի քարանետ մեքենա, որի տեղադրության համար հարկավոր էր 2,16×3,36 քառ. մետր տեղամաս[40]։

Պաշտպանության ժամանակ հեծելազորի և հետևակի ոտքերի տակ նետելու համար օգտագործել են նաև երկաթյա եռաթև ու քառաթև փշեր, որոնց մի ծայրը բոլոր դեպքերում ցցվում էր վեր։ Կարասներում և մեծ անոթներում հաճախակի հայտնաբերվող նավթը (կուպր) վկայում է նրա կիրառումը ոչ միայն կենցաղում՝ ճրագների համար, բժշկության մեջ, այլև պաշտպանական նպատակով, որի մասին գրում են Պլինիոս Ավագն ու Դիոն Կասիոսը։ Պլինիոսն ասում է, որ երբ մ. թ. ա. 74 թ. Լուկուլլոսը շրջապատել էր Սամոսատը (Շամուշատ), քաղաքացիները հռոմեացիներին վանում էին վառվող «մայտայի» (ձյութի, հավանաբար նավթի) օգնությամբ[41]։ Դիոն Կասիոսի վկայությունը վերաբերում է Լուկուլլոսի կողմից 69 թ. Տիգրանակերտի պաշարմանը. «Բաց բարբարոսները նետաձգությամբ և (պաշարողական) մեքենաների վրա թափած նավթով մեծապես վնասեցին նրան։ Այս դեղանյութը կուպրաշատ էր և բոցավառվող, այնպես որ հրկիզում էր այն ամենը, ինչի կպչում էր ու ոչ մի հեղուկով հեշտ չէր ա ն հանգցնել[42]։ Նավթն օգտագործվել է նաև, երբ Լուկուլլոսը պաշարեց Մծբինը[43] (մ. թ. ա. 68 թ.)։ Այս տեղեկությունները նավթը պաշտպանության մեջ օգտագործելու վերաբերյալ ամենահին վկայություններից են։ Նավթի մասսայական կիրառությունը կենցաղում և պաշտպանության մեջ ցույց է տալիս, որ այն իր շուտ բռնկվելու և դժվար հանգչելու հատկանիշների շնորհիվ արևելքում վաղուց է օգտագործվել պաշտպանական նպատակներով։ Ըստ Ստրաբոնի[44], Հյուսիսային Միջագետքում, որը մտնում էր Տիգրանի թագավորության կազմի մեջ, նավթ կար։

Պաշտպանության սիստեմում խիստ կարևոր էր հրամանատարական բարձունքի ճիշտ ընտրությունը, որտեղից պետք է իրականացվեր ընդհանուր ղեկավարությունը։ Արտաշատի հրամանատարական բարձունքը եղել է միջնաբերդի (№ 2 բլուր) արևմտյան հատվածում ձգվող ամենաբարձր կետում՝ կրաշաղախ պատերով ուղղանկյուն (300×250 մ) հարթակի վրա, որտեղ դիտակետի համար, հավանաբար, եղել է պալատական համալիրի մեջ մտնող աշտարակ։ Այստեղից հնարավոր էր հետևել քաղաքի հյուսիսային, արևելյան և արևմտյան հատվածներում թշնամու տեղաշարժերին, իսկ հարավային՝ դեպի գետը եղած, ինչպես նաև հարավ-արևելյան ու հարավ-արևմտյան հատվածները դիտելուն խանգարում էին №№ 6 և 7 բլուրները։ Սակայն այս բլուրները նույնպես լավ ամրացված էին և միջնաբերդի հետ միասին կազմում էին պաշտպանական սիստեմի առանցքը։ Պաշտպանության մեջ կարևոր տեղ էր հատկացված նաև առանձին կանգնած №№ 11 և 12 բլուրներին։ Քաղաքի միջնաբերդը, հավանաբար նաև դեպի միջնաբերդը տանող հատվածը, № 1 բլուրը և կարևոր հանգուցային կետերը

---

37 А. М. Акопян. Каменные ядра из Арташата.—Проблемы античной культуры. М., 1986, с. 232—237, рис. 1—2.

38 Г. А. Лордкипанидзе. К истории древней Колхиды. Тбилиси, 1976, с. 34.

39 Դակտիլ (մատ)=18,5 մմ։

40 В. П. Толстиков. О системе обороны акрополя Пантикапея.—Сообщения Гос. музея изобразительных искусств им. А. С. Пушкина, вып. VII, М., 1984, с. 46.

41 Plin. NH, 11, 108.

42 Դիոն Կասիոս (թարգմ. Ս. Մ. Կրկյաշարյանի). Երևան, 1976, XXXVI, 1, 2։

43 Նույն տեղում, XXXVI, VI_1, VII_3։ Հ. Մանանդյան. Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության. Երկեր, 1, Երևան, 1977, էջ 221։

44 Страбон, XVI, 1, 24.

պաշտպանվում էին զինվորների կողմից։ Նշված պաշտպանական կառույցներին կից հայտնաբերվել են զինվորների համար զորանոցներ և ռազմամթերքի պահեստներ։ Նման պահեստներ և կայազորի համար սենյակներ եղել են նաև Տիգրանակերտում[45], Գառնիում, Պանտիկապեյոնում է այլ վայրերում, որոնք, ըստ Փիլոնի, այդ շրջանի պաշտպանական կառույցների կոնստրուկտիվ տարրերից են[46]։ Քաղաքի մնացած պարիսպները պաշտպանվել են աշխարհազրայինների կողմից։

Այսպիսով, Արտաշատն ունեցել է պաշտպանական ընդարձակ, միասնական ՀԴուն մի սիստեմ՝ առանցքային երեք (№ 2, 6, 7 բլուրներ) անմատչելի ամրոցներով, որն ի վիճակի էր դիմագրավելու թշնամու մեծ ուժերին և դիմանալու երկարատև պաշարման։ Նման պաշտպանական սիստեմը թշնամուն զրկում էր մաներելու հնարավորությունից։ Երկու և ավելի միջնաբերդ ունեցող պաշտպանական սիստեմները Հայկական լեռնաշխարհում հանդիպում են դեռևս բրոնզեդարյան և ուրարտական ամրոցներում ու քաղաքներում[47]։

Պաշտպանական այս սկզբունքն ունի հինարևելյան արմատներ, որը ժառանգեցին նաև հելլենիստական քաղաքները և ավելի կատարելագործեցին այն։ Ստրաբոնը[48], որ կորդուքներին համարում է ամրություններ և ռազմական մեքենաներ սարքելու վարպետներ (նրանց օգտագործել է նաև Տիգրան II-ը), ասում է, թե նրանց քաղաքներն են Սարիսան, Սատալկան և Պինական, որը երեք միջնաբերդով միանգամայն ուժեղ ամրոց էր։ Անտիոքը[49] բաղկացած էր չորս ամրոցից, որոնք իրենց հերթին վերցրված էին ընդհանուր պարսպի մեջ։

Հին Հայաստանի մյուս նշանավոր քաղաքը Տիգրանակերտն էր, որը հիմնադրվել է մ. թ. ա. 77 թ.[50] Տիգրան II-ի կողմից, Տավրոսի հարավային ստորոտներում, Նիկեփորիոն գետի ափին, Աքեմենյանների «Արքունական ճանապարհի» մոտ[51]։ Այսինքն, տեղի ընտրությունը թե՛ ստրատեգիական և թե՛ տնտեսական առումով շատ հարմար էր։

Ըստ Ապիանոսի[52] Տիգրանակերտն ունեցել է 50 կանգուն (25—26 մ) բարձրությամբ պարիսպներ, որոնք այնքան լայն են եղել, որ նրանց մեջ ձիերի համար ախոռներ և պահեստներ են կառուցվել։ Պլուտարքոսը[53] վկայում է, որ Տիգրանակերտը հսկայական քաղաք էր։ Կորնելիոս Տակիտոսն ասում է, որ Տիգրանակերտը հզոր պարիսպ ուներ, որը շրջափակում էր բավականին լայն Նիկեփորիոն գետը, իսկ այնտեղ, որտեղ Նիկեփորիոնը հուսալի պաշտպանություն չէր ապահովում, հսկայական խանդակ էր փորված։ Ինչպես տեսնում ենք, Տիգրանակերտը ունեցել է ջրային հուսալի պատնեշ (որի դիմաց կառուցված են եղել քաղաքի հզոր պարիսպները իրենց դարպասներով, արտելքներ կատարելու համար թողնված դռնակներով) և ամուր միջնաբերդ[54], որի շնորհիվ հայերը կարողացան դիմանալ Լուկուլլոսի երկարատև պաշարմանը և միայն հույների դավաճանության պատճառով հռոմեացիներին հաջողվեց գրավել քաղաքը[55]։

Գառնի ամրոցն առաջին անգամ հիշատակվում է Տակիտոսի[56] կողմից մ. թ. 51—52 թթ., կապված Արտաշեսյանների դինաստիայի անկումից հետո Հայաստանում ստեղծված քաղաքական անցուդարձի հետ։ Նա նշում է, որ Գառնին պաշտպանված էր և՛ տեղադրությամբ, և՛ հռոմեական կայազորի շնորհիվ։ Բարբարոսները, անծանոթ լինելով պաշարողական մեքենաներին և ամրոցներ գրավելու արվեստին, չկարողացան գրավել այն։ Այս վկայությունից ելնելով ենթադրվում է, որ որձաքարե մեծ զանգվածներով կառուցված պարիսպն արդեն կար։ Ամրոցի

---

45 App. Mithr. Eup., 84.

46 В. П. Толстиков. К вопросу об оборонительных сооружениях акрополя Пантикапея в IV—I вв. до н. э.—ВДИ, 1977; № 3, 158—161, рис. 4, 5; Он же. О системе обороны акрополя Пантикапея, с. 40—41 (գրականությունը տե՛ս նույն տեղում).

47 Կ. Կ. Ղաֆադարյան. նշվ. աշխ., էջ 33—35։

48 Страбон, XVI, 1, 24.

49 Նույն տեղում, XVI, II, 4։

50 Г. Х. Саркисян. Тигранакерт, М., 1960, с. 61.

51 Հ. Մանանդյան. նշվ. աշխ., էջ 171—174։

52 App. Mithr. Eup., 84.

53 Плутарх. Лукулл, XXV.

54 Հ. Մանանդյան. նշվ. աշխ., էջ 171—174։ Ժ. Դ. Խաչատրյան. նշվ. աշխ., էջ 53—54։

55 Հ. Մանանդյան. նշվ. աշխ., էջ 196։

56 Тацит. Анналы, XII, 45.

կառուցման ժամանակի վերաբերյալ տարբեր կարծիքներ կան[57] (մ. թ. ա. III դար, մ. թ. ա. III—II դդ. և այլն), սակայն, բոլոր մեզ, ամրոցը և տաճարը կառուցվել են մ. թ. I դարի 70-ական թթ. Տրդատ I-ի կողմից[58]։

Գառնի ամրոցը գտնվում է Աղատ գետի հանկյունաձև հրվանդանի վրա։ Հարավից, հարավ-արևմուտքից և մասամբ նաև արևելքից 60—100 մ բարձրությամբ ուղղահայաց ժայռերի շնորհիվ այն անմատչելի է։ Հյուսիսից, հյուսիս-արևմուտքից և արևելքից, որտեղից թշնամին կարող էր անարգել մոտենալ, փակված է գրեթե կիսաշրջանաձև հզոր պարսպով։ Ամրոցի[59] պարսպի երկարությունը 314.28 մ է, ունի 14 քառանկյուն աշտարակ (5,90—6,70 մ), մեկ դարպաս (լայն. 2,32 մ), որը գտնվում է հյուսիս-արևելյան մասում, և արտելքի համար թողնված մի դռնակ պարսպի արևմտյան մասի վերջավորության վրա։ Դարպասը կամարակապ է, պաշտպանվում է երկու աշտարակներով։ Արևելյան հատվածում, որտեղ լանջը թեք է և ավելի քիչ ուժեր էին պահանջվում պաշտպանության համար, աշտարակները (թվով չորս) կառուցված են իրարից 25—35 մ հեռավորության վրա, իսկ հյուսիսային և արևմտյան հատվածում, որտեղ տեղանքը հարթ է և թշնամին կարող էր ավելի շատ ուժեր կուտակել, աշտարակները (տասը հատ) ավելի խիտ են, և պարսպից 3—3,50 մ առաջ են դրված։ Թեև տեղանքը թույլ է տալիս ուղիղ կառուցելու, բայց մուտքից աջ, հյուսիսային մասում, IV—V աշտարակների շրջանում, պարիսպն աղեղնաձև ներքևված է, ինչպես նման դեպքում խորհուրդ է տալիս Փիլոն Բյուզանդացին[60]։ Այդ եղանակով են ստեղծվել պաշտպանական առանձին հատվածները[61]։ Պարսպապատի լայնությունը 2,07—2,12 մ է, որը միանգամայն բավարար է զինվորների ազատ տեղաշարժի համար, իսկ աշտարակների մեծությունը թույլ է տալիս նրանց հրա տեղադրել քարանետ և նետարձակ մեքենաներ։ Գառնիում քարանետ մեքենաների մասին են վկայում պեղումների ժամանակ հայտնաբերված, տարբեր չափերի ու ծանրության ռմբաքարերը, որոնք մեծ մասամբ հավաքված են գետից և շրջակայքից։ Ենթադրվում է, որ պարիսպների վրա բարձրանալու համար կառուցված են եղել քարե հատուկ աստիճաններ[62], սակայն ներսից, պարիսպների ամբողջ պարագծով, քարե աստիճանների ոչ մի հետք չի հայտնաբերվել, ուրեմն, ամենայն հավանականությամբ, այստեղ ևս օգտվել են շարժական աստիճաններից (նկ. II, 3)։

Պարիսպները կառուցված են տեղական կապտավուն որձաքարի զանգվածներից։ Հիմքերը հասցված են մինչև ժայռը, իսկ այնտեղ, որտեղ դա հնարավոր չի եղել, կառուցել են կրաշաղախով ամրացված սովորական հիմքեր։ Քարերը իրար հետ միացված են միայն հորիզոնական, երկաթե գամերի օգնությամբ։ Շաղախը օգտագործված է որպես դատարկ տարածությունները լրացնող միջոց, հիմնական կրող մասսան քարն է։

Այսպիսով, Հայաստանի անտիկ քաղաքների և ամրոցների պաշտպանական համակարգերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տեղական վարպետները, մինչհելլենիստական ամրաշինության հարուստ տրադիցիաները հարստացնելով տվյալ ժամանակաշրջանի պաշարողական արվեստի նվաճումներով, այն հասցրել են զարգացման նոր աստիճանի։ Նրանք ստեղծագործաբար են կիրառել անտիկ մեխանիկների տրակտատները պաշտպանական կառույցների մասին։ Պարիսպները ռելիեֆին համապատասխան բեկված գծերի՝ զիգզագաձև և աստիճանաձև անցումների ձևով կառուցելու տարբերը Հայաստանում կիրառվել են դեռևս ուրարտական շրջանում։ Այդպիսի օրինակ է հենց Արտաշատի ուրարտական պարիսպը, որտեղ կան աստիճանաձև անցումներ։ Այդ տարբերն ավելի շեշտված ձևով առկա են Թելլեբարինիի պաշտպանական համակարգում[63]։ Արտաշատի պաշտպանական համակարգը, սակայն, այնքան կատարյալ է եղել, ռելիեֆը այնպիսի հնարամիտ ձևով է օգտագործվել, որ շինարարական երկրորդ շրջանում (մ. թ. 60-ական թթ.), երբ քաղաքը նորից կառուցվեց, այն գրեթե նույնությամբ վերականգ-

---

57 Б. Н. Аракелян. Гарни I. Результаты раскопок 1949—1950 гг. Ереван, 1952. с. 35—37; Հ. Մանանդյան Գառնիի հունարեն արձանագրությունը. Երևան, 1946, էջ 20։ Ա. Ա. Սահինյան. Գառնիի անտիկ կառույցների ճարտարապետությունը. Երևան, 1983, էջ 205—207։

58 Ж. Д. Хачатрян. Гарни V. Античный некрополь. Ереван, 1976, с. 132.

59 Ա. Ա. Սահինյան. Նշվ. աշխ., էջ 31—48։

60 Филон Византийский. О фортификации, 8, 1, ААМ, с. 46.

61 Гарни I, с. 31.

62 Ա. Ա. Սահինյան. Նշվ. աշխ., էջ 48, նկ. 12—14։

63 Б. Б. Пиотровский. Кармир-блур, III. Ереван, 1955, рис. 1.

նրվեց։ Ռազմաինժեներական մտքի զարգացման, տեղական և հելլենիստական ավանդների փայլուն զուգորդման օրինակ է նաև Գառնիի պաշտպանական համակարգը, որտեղ պաշտպանության ծանրության կենտրոնը պարսպապատերից փոխադրված է աշտարակների վրա։

Հայաստանի պաշտպանական համակարգերում կան և՛ շառանկյուն, և՛ կլոր աշտարակներ։ Վերջիններս հանդիպում են Արմավիրում, Արտաշատում, երկու հայազայուրում, հնարավոր է նաև Արշամաշատում[61], որը վկայում է այդ կատարյալ ձևի լայն տարածման մասին։

Հայաստանի անտիկ շրջանի պաշտպանական կառույցները, ուրարտականի համեմատ, ավելի լավ են կազմակերպված և հասել էին զարգացման բարձր մակարդակի։ Հելլենիստական երկրների, այդ թվում նաև Հայաստանի քաղաքներն իրենց ստրատեգիական դիրքի, մեծ ու հզոր պաշտպանական համակարգերի շնորհիվ կարող էին կատարում երկրի պաշտպանության դերձում։

Հայաստանի անտիկ շրջանի պաշտպանական կառույցների ուսումնասիրությունը թույլ է տալիս հետևելու դրանց զարգացման ընթացքին քաղաքական ու պատերազմական երկարատև, բուռն մի ժամանակահատվածում, վեր հանել զարգացման տենդենցները, ընդհանրությունները և առանձնահատկությունները։ Հայաստանի այդ դրության բարձր զարգացման հասած պաշտպանական համակարգերը հանդիսացան այն հիմքը, որի վրա բարձրացան ու ստեղծվեցին միջնադարյան Հայաստանի քաղաքների ու ամրոցների տնտիկ կառույցները։

ОБОРОНИТЕЛЬНЫЕ СООРУЖЕНИЯ В АРМЕНИИ АНТИЧНОГО ПЕРИОДА

Ж. Д. ХАЧАТРЯН

Резюме

Начиная с III в. н. э. в Армении был основан ряд городов, имевших выгодное стратегическое положение и мощные оборонительные сооружения. Для изучения оборонительных сооружений большое значение имеют раскопки Арташата, где зафиксировано около 4500 м крепостных стен. Благодаря мастерски использованному рельефу местности, хорошо продуманной системе оборонительных стен и круглых башен, фортификационная система Арташата была одной из лучших в античный период. Исследование оборонительных сооружений Армении античного времени позволяет проследить не только их развитие в довольно широком временном диапазоне, но и выявить тенденции этого развития, их общности и различия. Достигшие высокой ступени развития оборонительные системы Армении этой эпохи явились основой, на которой выросли неприступные города и крепости средневековой Армении.

---

[61] B. Ogün. Haraba Excavations. 1970, Keban Project 1970 Activities. Ancara, 1972. p. 77—78, pl. 50—53.